ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի ողջույնի խոսքը ՀՈՒԱԱ 6-րդ ընդհանուր ժողովին

Մեծարգո հյուրեր, հարգելի գործընկերներ, սիրելի ուսանողներ,

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանն ուրախ է ողջունելու ձեզ՝ Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի 6-րդ ընդհանուր ժողովի շրջանակներում:

Մենք միշտ, և այսօր էլ, շարունակում ենք խրախուսել ակտիվ, գիտակից և հասուն ուսանողություն ունենալը: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական ինքնակառավարման մարմնի աշխատանքները հիմնված են ժողովրդավարության ամենաբարձր արժեքների վրա, մեր բուհի Ուսանողական խորհուրդն իրավամբ անկախ ներկայացուցչական համահավաք մարմին է, որը բաց է բոլոր ուսանողների առաջ: Ես ինքս էլ միշտ հանդես եմ գալիս ուսանողի շահերը պաշտպանողի դիրքերից:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Այսօր այստեղ են հավաքվել հայաստանյան ուսանողության ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների պատվիրակները՝ անցկացնելու իրենց հերթական կիսամյակային ժողովը: Մեզ համար պատիվ է հյուրընկալել Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիային: Մենք այն բուհերից ենք, որն ուշիուշով հետևում և աջակցում է այս կառույցի աշխատանքներին, որի լիիրավ անդամ է Ձեզանից յուրաքանչյուրի Ուսանողական խորհուրդը:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը բազում միջոցառումներ է կազմակերպել Ուսանողական ազգային ասոցիացիայի հետ համատեղ, որոնք միշտ էլ ընթացել են ամենաբարձր մակարդակով:

Ազգային մակարդակում ունենալ ուսանողական համահավաք այսպիսի լուրջ կազմակերպություն, որը կարողացել է իր հովանու ներքո համախմբել հայաստանյան ուսանողության ավելի քան 75 տոկոսին, մեզ ուղղակի հիացնում է: Ես անձամբ ծանոթ եմ այս երկու օրերի ընթացքում ձեր կողմից քննարկվելիք հարցերին, ինքս իմ կարծիքն եմ արտահայտել որոշ հարցերի վերաբերյալ: Այն փաստը, որ այսօր ուսանողական ազգային ասոցիացիան առավել շատ է կենտրոնացնում իր ուշադրությունը բարձրագույն կրթությունում ուսանողների ներգրավվածության բարձրացման աստիճանի վրա, արդեն իսկ լավ է: Մենք ուզում ենք տեսնել այնպիսի ուսանողներ, որոնք չեն լինի զուտ դիտորդ կրթական գործընթացներում, այլ կլինեն դրանց կրողը և կարևորագույն շահառուն: Այսպիսի քննարկումները խոստանում են լինել բեղմնավոր և արդյունավետ:

Ես բարի երթ եմ մաղթում Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի 6-րդ Ընդհանուր Ժողովի պատվիրակներին

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտորԿորյունԱթոյան